

**ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ, ՆՇՈՒՄՆԵՐ,
ԵՒ ՎԻՃԱՐԿՈՒՄՆԵՐ**

**COMMUNICATIONS, NOTES
ET DISCUSSIONS**

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԸ ԵՒ ԻՐ
ՀԱՄԱԽՈՀՆԵՐՆ
ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

ԺԹ. դարի 50-60ական թուականներին Հայ յեղափոխական դեմոկրատ Միքայէլ Նալբանդեանն ու իր համախոհներ՝ դեմոկրատներ Սմբատ Շահազիզը, Յարութիւն Սըվաճեանը, Սերոբէ Թազաւորեանը, Արմենակ Հայկունին, Գրիգոր Զիլինկիրեանը, Մատթէոս Մամուրեանը, Ստեփան Ոսկանեանը եւ ուրիշներ ձգտում էին հայ ժողովրդին լուսաւորել եւ ազատագրել ցարական Ռուսաստանի եւ Սուլթանական Թուրքիայի բռնապետական լծից՝ Իտալիայի օրինակով մատնանշելով ապստամբութեան ուղին:

Իտալական ազգային-ազատագրական շարժումների ֆոնի վրայ է ծնւում Միքայէլ Նալբանդեանի «Իտալացի աղջկայ երգը»: Հեղինակն իտալացի աղջկայ օրինակով ոգեշնչւում էր հայ ժողովրդին:

Մեր հայրենիք շղթաներով
Այսօր տարի կապկպուած,
Իւր քայքայ քոյուղ սուրբ արիւնով
Պիտի լինի ազատուած:

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի ազամ պիտ մեռնի.
Բայց երանի, որ իւր ազգի
Ազատութեան կը գոհուի¹:

1 Ի Հիւսիսափայլ, 1861, թիւ 11, 402:

Հայ ժողովրդի ազատագրական պայքարին, Նալբանդեանի կարծիքով, տղամարդկանց հետ համահաւասար պէտք է մասնակից լինեն նաեւ հայ կանայք: Դրա համար էլ Նալբանդեանը պատմական շրջադարձ է կատարում Ե. դար եւ բերում է Եղիշէի ժամանակուայ կանանց օրինակը:

Ո՛հ, իմ սիրտը կտրատում է
Տեսնելով այսպէս սեր
Դէպի քշուառ մի հայրենիք,
Որ ոտնակոխ եղած էր:

Սորա կէտը, կէսի կէտը,
Գէթ երեւէր մեր ազգում.
Բայց մեր կանայք... ո՛ւր, Եղիշէ՛,
Ո՛ւր մեր տիկնայք փափկասուն²:

Նալբանդեանը ափսոսանք է յայտնում, որ իր ժամանակների համար հայ կանայք այնպիսիք չեն, ինչպիսիք էին հայոց Ոսկեդարում:

Բանաստեղծութեան առարկան, հաւանաբար, վերցրել է իտալացի բանաստեղծ Լուիջի Մերկանտինիի «Սապրիի հասկահաւաքը» դրուածքից³: Աւստրիացիների դէմ կռուի դաշտ մեկնելուց առաջ հարազատ քոյրը եղբորն է յանձնում անքուն գիշերներ անցկացրած իր ազնիւ աշխատանքի արդիւնքը՝ մետաքսի վրայ գործած եռագոյն իտալական դրօշը:

Եղբայրը ողջունում է քրոջ աշխատանքը եւ աւելի ոգեւորուած ու արիացած գէնքն ու զրահ կապում է, նստում իր սեւաթոյր ձին եւ մեկնում ռազմի դաշտ՝ միաժամանակ քրոջը յանձնարարելով, որ եթէ զոհուի ռազմի դաշտում, թող չսպայ, քանի որ ինքն իր հետ կը զոհի նաեւ մի քանի թշնամի եւ իր արիւնով յաւերժ պաշտպան կը կանգնի իտալիայի ազատութեանը:

Հայ դեմոկրատը կրկին համեմատութեան եզրեր է փնտռում իտալացի եւ հայ կանանց միջեւ՝ առաջ քաշելով այն միտքը, որ եթէ նման կանայք գտնուեն հայերի մէջ եւ ոչ թէ փափկասուն-

2 ՆԱԼԲԱՆԴԵԱՆ, Մ., Երկերի Լիակատար ժողովածու, հտ. 4, Երևան 1983, 94-95:

3 Անդ, հտ. 1, Երևան 1979, 437-438:

ներ լինէին, ապա հայրենիքը անպայման կ'ազատագրուէր օտարի լծից: Հեղինակը այն եզրակացութեան է գալիս, որ՝

Ձէ թշուառ չէ Իտալիան,
Եթէ կանայք այսպէս են⁴:

Նալբանդեանը «Իտալացի աղջկայ երգը» բանաստեղծութիւնը գրել է Չողէն Մայնի վերայ Ֆրանկֆուրտի մօտ (Գերմանիա):

Որքան էլ Նալբանդեանի «Իտալացի աղջկայ երգը» իր թեմատիկայով առնչուում է իտալացի բանաստեղծ Լուիջի Մերկանտինիի «Սապրիի հասկահաւաքը» բալլադի հետ, սակայն նոյնքան էլ իր էութեամբ տարբերուում է վերջինից: Ժամանակին պրոֆեսոր Սերգէյ Դարոնեանը նկատել է. «Բայց Նալբանդեանի «Երգը» սոսկ հեռաւորապէս է յիշեցնում այդ բալլադը: Կարելի է խօսել որոշ համահնչունութեան մասին, բայց ոչ աւելի: Սիւժէի առումով դրանք տարբեր են: Իտալացի բանաստեղծի բալլադը Նալբանդեանի համար կարող էր խթան հանդիսանալ ստեղծելու իւրօրինակ երկ»⁵:

Համահունչ է այս թեմայի հետ Մ. Նալբանդեանի արտասահմանում գրած մէկ ուրիշ քնարական «Անցած օրերի» բանաստեղծութիւնը: Այն նոյնպէս գրուել է 1859ին: Այս բանաստեղծութիւնը չի տպագրուել՝ հեղինակի կենդանութեան օրօք, ունենալով խիստ անձնական բնոյթ: Հետաքրքիր է այս բանաստեղծութեան թեմատիկան եւս, որ նուիրուած է նոյն անձին:

Անցած օրերի,
Անցած ժամերի
Դու յիշատակներ
Ինձ ես յիշեցնում.

Բայց նո՛ւա ոչ միշտ
Գաղցր են իմ հետ,
Այլ շատ այն է որ,
Ինձ են տխրեցնում:

Կեանքիս օրերը
Մրրիկի նման
Թռան գնացին.
Ես ծերանում եմ.

4 Անդ, 109:

5 ԴԱՐՈՆԵԱՆ, Ա., Միքայէլ Նալբանդեան, Երևան 1979, 342:

Արծաթ-աջրած
 Մագերի թելեր
 Իմ գլխի վրայ
 Որոնք փայլում են:

Անցա՛ն իմ օրեր,
 Իսկ ես ընդունայն
 Կեանքս վատնեցի.
 Իմ պարզմտութեամբ

Ես աշխարհ ամէն
 Իմ պէս կարծեցի.
 Է՛հ, քար ձեր գլխին,
 Որդիք կորստեան⁶:

Նալբանդեանի դիւանում պահպանուել է մի լուսանկար, որ պատկերում է իտալացի նկարչուհուն: Լուսանկարը ճշտում է Նալբանդեանի արտասահմանում գտնուած ժամանակը, նրա հետ բանաստեղծի հանդիպման եւ վեներտիկից գրած նամակի մասին: Կարծում ենք, որ հէնց այդ միջնորդում է ստեղծուել Նալբանդեանի «Իտալացի աղջկայ երգը» հանրայայտ բանաստեղծութիւնը:

Պատահակա՞ն էր արդեօք, որ այս հայրենասիրական բանաստեղծութեան խօսքերն ընտրուեցին որպէս հայկական նորաստեղծ հանրապետութեան օրհներգ:

Նալբանդեանը դիմում է իտալիայի օրինակին, այսինքն այն ժողովրդի, որի դասերն, անշուշտ, ուսանելի էին հայ ժողովրդի համար:

Նա գտնում էր, որ հայ ժողովուրդը բռնապետական լծից կ'ազատագրուի, նաեւ այն դէպքում, որ ընթանայ ուսումնական ժողովրդի լուսաւորեալ գործիչների՝ յեղափոխական-դեմոկրատների նշած ապստամբութեան միջոցով կամ Ջ. Մաճճինիի եւ Ջ. Կարիպալտիի առաջ քաշած յեղափոխութեան ուղիով. «Ազգի ազատագրման հեռանկարները նա չէր կապելու Բոնապարտի կամ Քաւուրիի, այլ Մաճճինիի եւ Գարիբալդիի, Գերցեմիի եւ ուսույ յեղափոխական այլ գործիչների գլխաւորած շարժումների հետ⁷»:

6 ՆԱԼԲԱՆԴԵԱՆ, Մ., անդ, 73:

7 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Ա., Նալբանդեանը եւ նրա ժամանակը, Երեւան 1955, 320:

Քաւուրի գնահատման հարցում Նալբանդեանի հայեացքներն աւելի առաջադիմական էին, աւելի գործնական այն առումով, որ տարբերեց Մաձձինիին ու Կարիպալտիին, որոնք իտալական ազատագրական շարժման դեմոկրատական թեւին էին պատկանում, ինչպէս նաեւ զուսպ ուղղութեան ներկայացուցիչ կոմս Քաւուրին: Նալբանդեանը գովեստով էր խօսում «Իտալական հերոս»՝ Կարիբալդիի մասին եւ նուազեցնում կոմս Քաւուրի դերը, որ իբր թէ «անդամատեալ Իտալիոյ միաւորութեան եւ միահեծան պետութիւն կազմելու» փորձ էր արել:

Մեծանուն բանաստեղծ Սմբատ Շահազիզը աշխատակցելով «Հիւսիսափայլ» ամսագրին, նոյնպէս խանդավառուած էր ժամանակի իտալական հերոսական դէպքերով: Պատահական չէ, որ 1864ին Զէյթունի հերոսական ապստամբութեան անմիջական ազդեցութեան տակ նա գրեց «Լեւոնի վիշտը» պոեմը ուր ակնարկներ կան իտալական դէպքերի մասին, ինչպէս եւ «Իտալուհիք եւ իտալացիք», «Եզվիտներ եւ Զէյթուն» բանաստեղծութիւնները եւ այլ գործեր:

«Իտալուհիք եւ իտալացիք» բանաստեղծութեան մէջ նա գրում էր.

Իտալուհիք, եւ ձեզ նման
Արեւելում մի անգամ,
Ձեր քայրերը զինուորեցան
Թշնամու դէմ անզգամ:

Արեան գնով Հայաստանին
Գնեցին նոքա փրկութիւն,
Եւ թաղեցին հողի ծոցին
Անմեղ ծաղկած կուսութիւն⁸:

8 ՇԱՀԱԶԻԶԵԱՆ, Ս., «Լեւոնի վիշտը» եւ զանազան բանաստեղծութիւններ, Մոսկուա 1865, 135:



Անյայտ իտալացի նկարչուհու դիմանկար
(պահպանում է Մ. Նալբանդեանի արխիվում):
Վենետիկ - 1859

Բերելով իտալական եւ հայկական ազատագրական շարժումների օրինակը՝ հեղինակը ձգտում է ոգեւորել ժողովրդին:

Սմբատ Շահազիզը գրել է նաեւ «Ձկնուցիներ» բանաստեղծութիւնը, ուր՝ գովերգում է Կիլիկիայի բարձունքներում կռուող հայութեան քաջագործութիւնները:

ԺԹ. դարի 50-60ական թուականներին հայ հասարակական մտքի ամէնալուսաւոր դէմքերից էր Յարութիւն Սվաճեանը: Նա էր, որ Կ. Պոլսում հրատարակեց «Մեղու» պարբերականը, որ ժամանակի առաջաւոր թերթերից մէկն էր:

Ինչ հարցեր էին հետաքրքրում Յարութիւն Սվաճեանին իտալական ժողովրդի ազգային-ազատակգական պայքարում եւ ինչ էր նա նման հարցեր առաջադրում «Մեղու» պարբերականում:

Նկարագրելով իտալիան, նա նկատի ունէր նաեւ հայ ժողովրդի ճակատագիրը, ժողովուրդ՝ որ գտնւում էր նման ծանր վիճակում:

1860ին. «Մեղու»-ում, Դեյլի Նիւզ անգլիական լրագրից թարգմանաբար տպագրւում է «Կարիտի» վերնագրով յօդուածը:

Ինչ հարցեր էր առաջ քաշում այս յօդուածը, մանաւանդ Կարիտալտի կապակցութեամբ: «Ատենէ մի վեր, - գրում է յօդուածագիրը,- անուն մը կը հեղեղէ ամէն բերան, եւ աշխարհ ասիբերան կը նայի այն անուան տիրոջն ետեւէն. Ջարմանքով հեռու կը դիտէ անոր ամէն մէկ շարժումները, գնայելով ականջ կը դնէ անոր ամէն խօսքերուն եւ սխալանալով կը պատմէ անոր անշահախնդիր առանձնութիւնը, ուր ծածկել կը ցանկանայ ինքզինքը՝ իր փրկեալներուն իրեն ընծայելու յարգանքը իրեն ծանրութիւն մը համարելով»⁹: Յօդուածում հիմանականում խօսուում է այն մասին, որ 1860ին իտալական ազգային-ազատագրական շարժման թէ՛ պահին, Վիկտոր-էմմանուէլը եւ Քաւուրը աշխատում են Կարիտալտիին հեռացնել քաղաքական ասպարէզից: Իտալական ժողովրդի հերոս գաւակը թողնում է ռազմի դաշտը եւ հեռանում Կապրերա կղզի: Իտալական ժողովրդի այս փաստը մնաց առեղծուած: Նրանք զուտ քաղաքական նպատակ էին հետապնդում. նախ՝ չէին ուզում յարաբերութիւններն վատթարացնել Ֆրանսիայի հետ եւ ապա ցանկանում ժամանակ շահել ուժերը վերախմբաւորելու համար: Այդ մտադրութեամբ եւ նման ծրագրով նրանք

9 Ի Մեղու, քիւ 116, 20 նոյեմբերի 1860, 250-251:

մեծ հարուած կը հասցնէին ժողովրդին, չէ որ ասպարէզից հեռացուած էր ժողովրդի սիրուած հերոսը «Այս անձը,- Կարիպալտու մասին գրում էր յօդուածագիրը,- առաքելաբար Աստուծոյ, կու գայ մարդկութեան բարերար ըլալու եւ գերի ու ստրուկ ժողովուրդներու իրենց ազատութիւնը ստացնելով՝ կը քաշուի, կ'առանձնանայ իր տունը, ուրկէ ելած էր միայն ի վերուստ իրեն յանձնեալ պաշտօնը կատարելու ամենայն հաւատարմութեամբ:

Կարիպալտին Իտալիան ազատեց.

Կարիպալտին փոխարինութիւն մը չընդունեց:

Ահա այս երկու յատկութիւններն են, որ աշխարհիս սերն անոր վրայ քաշեցին եւ այսօր առհասարակ մարդ անլի ակնածութեամբ անոր անունն ի բերան կ'առնէ, քան թէ աշխարհիս էն մեծ կայսերաց անունը»¹⁰:

Այստեղ շեշտուած է, որ Կարիպալտին գերի ու ստրուկ ժողովուրդի բարերարն է, Իտալիան ազատեց եւ փոխարինութիւն մը չընդունեց: Ոչ բոլոր պատմական հերոսներն են այսպիսի առաքինութեամբ օժտուած: Եւ յետոյ շարունակում է. «Տա՛ր երկինք, որ ամէն ընկնեալ ազգերու համար ալ այսպիսի անձինք խառնէին եւ աշխարհիս խաղաղութիւնը հաստատ հիմանց վրայ դրուէր»¹¹: Յարութիւն Սվաճեանը այս դէպքում նկատի ունէր հայ ժողովրդին թմրութիւնից հանելը: Նրա ցանկութիւնն էր նման առաքինի անհատներ տեսնել իր ժողովրդի մէջ: Նա այս հարցում յոյսը ամբողջովին կապում էր «նոր սերնդի» հետ: Կարիպալտին «Մեղու»ի կարծիքով նոր ժամանակի դիւցազն էր, որ թնդացրեց նոր սերնդի սիրտը:

«Մեղու»ում այս յօդուածը տպագրուեց 1860ի Նոյեմբերի 20ին՝ այն օրը, երբ յեղափոխական դեմոկրատ Միքայէլ Նալբանդեանը Հնդկաստան ուղեւորուելու ճանապարհին՝ հասաւ Կ. Պոլիս, որտեղ մնաց մէկ ամիս եւ հանդիպում ունեցաւ Յարութիւն Սվաճեանի եւ իր միւս համախոհների հետ: Սա եւս վկայում է իտալական հարցում Յարութիւն Սվաճեանի եւ Միքայէլ Նալբանդեանի մասին:

«Մեղու»ի 1861ի Դեկտեմբերի 20ի, թիւ 147ում տպագրուում է Միքայէլ Նալբանդեանի «Իտալացի աղջիկ» 1859 թուականից բանաստեղծութիւնը: Յարութիւն Սվաճեանը կանանց ազա-

10 Ա.Ա.:

11 Ա.Ա.:

տուլթեան հարցում եւս կանգնած էր նալբանդեանական դիրքերում: Նա գիտակցաբար փոքր-ինչ խմբագրելով Միքայէլ Նալբանդեանի «Իտալացի աղջկայ երգը» յայտնի բանաստեղծութեան վերնագիրը «Իտալացի աղջիկ» ձեւով, փորձում է դրանով չբացայայտել իր գաղափարական կապերը յեղափոխական դեմոկրատի հետ:

Յարուլթիւն Սվաճեանը «Մեղու»ի 1862ի Մարտի 20ի համարում գետեղում է (այս նիւթը արտատպւում է «Մասիս»ի 1862ի թիւ 526ից) Պալերմոյի համալսարանի սաներին ուղղուած կարիպալտիի մէկ ուրիշ նամակը: Իտալացի մեծ հերոսը իր հայրենակից պատանիներին ուսուցանում էր, որ նրանք չհաւատան եւ ժամանակից շուտ չվստահեն պետական պաշտօնեաներին, որոնք «Ազատասիրի կերպարանք առած ատեննին աւելի վնասակար են»: «Ուրեմն պատանիները,- ասուած է նամակում,- բնաւ մի վստահիք այս վերջիններուն»:

Օգտագործելով կարիպալտու նամակը, Յարուլթիւն Սվաճեանը գտնում էր, որ «Աշխարհիս այս տեսակ դէպքերը զարմանալի մտնութիւն մը ունին»: Այս նամակը զուգադիպում էր Սամաթիոյ հայ պատանիների գործունէութեան հետ եւ նրանց միջեւ նմանութեան՝ եզրեր գտնում: Կարիպալտու նոյն նամակը Յարուլթիւն Սվաճեանը ուղղում է Սամաթիոյ Սահակեան սաների ընկերութեանը, նրանց զգուշացնում ազգի խաղաղութիւնը վրդովող եւ առաջադիմութեանը խոչընդոտող «ազգի խաւարաշրջիկ խումբին»: «Հետեւաբար մի վստահե՛ք նրանց,- խորհուրդ է տալիս Յարուլթիւն Սվաճեանը պատանիներին.- տղայ չըլլանք. Սիրելի ընկերներս, այլ չգիտութեմէ տղայանայք»¹²:

Նա դրուատանքով է խօսել ոչ միայն կարիպալտիի եւ Մաճճինիի, այլեւ Քաւուրի մասին: «Մեղու»ն տպագրում է պատմաբան Ղազարոս Յովակիմեանի «Քաւուր» վերնագրով աշխատութիւնից հատուածներ: Յարուլթիւն Սվաճեանն այս առիթով գրում է մի փոքր ծանուցում-առաջաբան, ուր գովերգում է Քաւուրին՝ Իտալիայի ազատագրութեան նուիրեալին:

Յարուլթիւն Սվաճեանը 1871ին, Միքայէլ Նալբանդեանի մահուանից յետոյ, «Մեղու»ում առաջին անգամ հրատարակեց Մ. Նալբանդեանի Նէպոլիից իրեն ուղղուած նամակը, դրան իբրեւ նախաբան կցում է «Նշխարք Միքայէլ Նալբանդեանցի» հատուածը

եւ դրուատալից ու գովեստի խօսքեր է ուղղում մեծ հայրենասէրի մասին: Նա ինքն իրեն պարտք է համարում գրել «իրաւամբ. գիտուն եւ ստուգիւ ազգասէր» Նալբանդեանցի վարքը, իրեն համարում է նրա բարեկամը: Ահա թէ ինչու նրա մասին «մէկ քանի մանր գրութիւններ» է հրատարակում, ուր երեւում են նրա հոգու փայլը եւ իղձերի արտացոլումը:

Երբ 1860ին Միքայէլ Նալբանդեանը այցելում է Նէպոլի եւ Մեսսինա, Ապենինեան թերակղզու ամբողջ տարածքում հիւսիսից հարաւ սկսել էին իտալական ազգային-ազատագրական շարժումները:

Միքայէլ Նալբանդեանը ականատես է լինում դէպքերի զարգացմանը: Նրան հարազատ էր հայրենասէրների պայքարը բռնակալական լծի դէմ, որոնք կեղեքում, ճնշում եւ ստրկացնում էին իտալացիներին:

Միքայէլ Նալբանդեանի նամակում արծածւում էր այն միտքը «թէ բռնակալութեան արուեստի դժոխային մեքենան հանգչում է անձնասէր եւ եսասէր ազնուականների ուսերի վերայ»: Իւրաքանչիւր բռնական մարդու պարտքն է «գարշիլ եւ զգուիլ» բռնակալութեան ուժից: Նալբանդեանը դատապարտում էր բռնակալութիւնը, լինէր «մեապոլիտանական մեղսիրտ ապստիւտիզմը», թէ թուրքական սուլթանիզմը: Ահա թէ ինչու այդ դասերը նա օգտակար էր համարում իր ժողովրդի համար եւ գտնում էր, որ մարդկութեան իրաւունքն ու ազատութիւնը հաւասար են ի ծնէ: Եթէ մէկը խլում է միւսի իրաւունքն ու ազատութիւնը, ուրեմն գողանում է միւսի սեփականութիւնը:

Այդպէս եղաւ եւ ազնուականների հետ, որոնք հասարակութեան մէջ «անարգութիւն է մարդկութեան անունին»: «Ազնուականը բռնաբարելով հասարակ ժողովրդի աստուածատուր ազատութիւնը եւ իրաւունքը, գրում է Մ. Նալբանդեանը, իլում է նորան սեղանապիղծ ձեռքով, եւ ուրիշները աղքատացնելով, հարստանում է եւ տիրապետում է ազգի բռնակալութեան վերայ: Այս բարոյական աւազակներին մա՛հ բարոյական»¹³: Մեսսինայի դղեակը, Նալբանդեանի կարծիքով, նէպոլիտանեան բռնակալութեան միակ խորհրդանիշն է՝ նրա խայտառակ դրօշակը, որ պաշտպանում էին Ֆրանսիսկոյ Երկրորդին հաւատարիմ մնացած 4000 զի-

13 Ազգասիրական գաղափարները հայ հրապարակախօսութեան մէջ, Երեւան 1982, 143:

նուորներ՝ զօրավար Ճեննարո Ֆեռզոլայի գլխավորութեամբ: Մեսսինայում ստեղծուել էր նոր կառավարութիւն, որի ռեզիդենցիայի վրայ ծածանուում էր Վիկտոր-Էմմանուէլի դրօշակը՝ միացեալ Իտալիայի խորհրդանշանը: Երբ Ֆեռզոլային իտալական նորաստեղծ պետութեան անունից առաջարկել են իր զօրախմբով անձնատուր լինել, վերջինս մերժել է եւ անգամ սպառնացել է ռմբակոծել քաղաքը: Ֆեռզոլան, հին՝ ազնուական դասակարգի ներկայացուցիչն էր: Այնպէս որ նրանից ամէն ինչ կարելի էր սպասել: Նա եւ նրա նմանները հայրենիքի ազատութեան եւ միութեան գաղափարից բարձր էին դասում իրենց շահերը: «Նորափոքը չէ, գրում է Միքայէլ Նալբանդեանը, որ արիւնքաքաւ Իտալիան աւելի բան կէս դար լիկուեցաւ եգիպտական չարչարանքի մէջ՝ ազնուականը ցոյց է տալիս գործով, որ թէ հնար ունենար, ապա ուրեմն անշուշտ խեղդելու էր Իտալիայի նորարոյրոջ ազատութիւնը դեռեւս խանգարուրքի մէջ»¹⁴:

Միքայէլ Նալբանդեանը համեմատութեան եզրեր է փնտռում Իտալիայի եւ Հայաստանի պատմական զարգացման միջեւ: Իտալական ազնուականութեան ներկայացուցիչ Ֆեռզոլայի անունը դնում է հայոց պատմութեան մի քանի դաւաճանների՝ Վասակի, Մեհրուժանի, Կիրակոս քահանայի եւ Վեստ-Սարգսի անունների կողքին:

Երբ Միքայէլ Նալբանդեանը մրրիկի պատճառով, Մարսէլ մտնելու փոխարէն ընկնում է Սիցիլիա կղզին, Մեսսինայի նաւահանգստում հաւաքուել էր երիտասարդների մի հսկայ բազմութիւն, որոնց կարմիր շապիկները վկայում էին, թէ նրանք պատկանում են իտալական հերոսի՝ Կարիպալտու բանակին: Այդ վառվռուն երիտասարդների ղէմքի վրայ գծագրուած էր ուրախութիւն եւ խղճի հանգստութիւն: «Կեցցե՛ Իտալիա, կեցցե՛ Կարիպալտի» անլուռ աղաղակում է հասարակ ժողովուրդը. «Կեցցե՛ Իտալիա, կեցցե՛ Վիկտոր-Էմմանուէլ», գոչում են քաղաքացիք, այսինքն միջնակարգ ժողովուրդը: Այս ուրախական բացականչութիւնը, թէպէտեւ յառաջանում էին տարբեր սկզբունքներից, վերաբերմունքը ղէպի Կարիպալտի եւ ղէպի Վիկտոր-Էմմանուէլը, բայց «Իտալիան» հարթում է այս խոշոր տարբերութիւնը եւ այս պատճառով եւս յիշեալ երկու կացութիւնները գործ տեսան եւ ամօթահար յաղթահարեցին ազնուական կացութիւնը, որ հերիքանալով անձնական դիւրութեամբ, նեպոլիտանեան նեղսիրտ

ապսոլիտորգմի ժամանակ, եթէ չկարողացաւ դէմ դնել ազգի միջից դուրս արձակուած դիմադրաւ զօրութեան, գէթ մեծ տհաճութեամբ լսեց եւ լսում է անլռելի «կեցցէները»¹⁵ :

Մ. Նալբանդեանը ուշադրութիւն էր դարձնում նաեւ այն հարցի վրայ, որ Մեսսինայի ծովածոցի մօտ կանգնած էին Փրանսիական եւ անգլիական զինուած երկու նաւ: Նրանք իբրեւ թէ եկել էին «պահպանելու» Իտալիայի մանուկ ազատութիւնը: Մինչդեռ նրանք եկել էին ոչնչացնելու այդ ազատութիւնը:

Պէտք է ասել, որ Ֆեռզոլայի կայազօրն այն ժամանակ գտնուում էր նիւթապէս եւ բարոյապէս ծանր վիճակում, զօրքի մեծ մասը ենթակայ էր սովի: Ահա թէ ինչու Ֆեռզոլան ստիպուած օգնութիւն է խնդրել իտալական կառավարութիւնից, իսկ վերջինս նրան բացասական պատասխան է տալիս: Դրա համար էլ Ֆեռզոլան որոշել էր իր կայազօրով դիմադրել այնքան ժամանակ, մինչեւ Ֆրանսիական Երկրորդը անձնատուր լինէր:

Միքայէլ Նալբանդեանի 1860ի Դեկտեմբերի 26ի երեկոյեան, Մեսսինայի թատրոնում, ակնատես է եղել մի հետաքրքիր դէպքի. թատրոնի սրահում, ուր մօտ երկու հարիւր հօգի էին հաւաքել, սուր վէճ է գնացել: Պարզուել է, որ վիճաբանողներից մէկը եղել է Վիկտոր-էմմանուէլի, այսինքն Իտալիայի միասնութեան համար պայքարող բուրժուազիայի, իսկ երկրորդը՝ Բուրբոնեան ազնուականութեան ներկայացուցիչը: Լինելով կատաղի հակառակորդներ հէնց թատրոնի մօտ նրանք խաչաձեւում են իրենց սրերը:

Նէպոլում նոյնպէս Միքայէլ Նալբանդեանը հանդիպում է տարբեր հայեացքներ ունեցող մարդկանց: Հասարակ ժողովուրդը գնում էր Կարիպալտու ետեւից, «միջնակարգը» կամ բուրժուազիան՝ Վիկտոր-էմմանուէլի, իսկ ազնուականները Փէռոլալիզմի այդ մնացուկները բռնել էին «թշուա՛ն ետընթացքի» ուղին: Միքայէլ Նալբանդեանի համակարանքը, ինչ խօսք, հասարակ ժողովրդի եւ իտալական ժողովրդական հերոս Կարիպալտու կողմն էր:

Մ. Նալբանդեանը նկարագրում է ԺԹ. դարի 60ական թուականների Նէպոլը, որի հրապարակները զարդարում էին Բուր-

15 ՆԱԼԲԱՆԴԵԱՆ, Մ., Երկերի լիակատար ժողովածու, հտ. 4, Երևան 1949, 83:

բռնների ժամանակների քանդակները: Բայց այն ճարտարապետական յուշարձանների մի մասը, որոնց վրայ դրուած էր Ֆրանսիական Երկրորդի անուանագիրը, ժողովուրդը խորտակում էր, իսկ նորաստեղծ յուշարձանների վրայ դրուած էր Վիկտոր-Էմմանուէլի ինքնագիրը: Մ. Նալբանդեանի մօտ Ֆրանսիական Երկրորդը հանդէս էր գալիս, որպէս հնի, իր դարն ապրածի, իսկ Վիկտոր-Էմմանուէլը՝ նորի խորհրդանշան: Քաղաքում ամէնուրեք ծածանուում էր իտալական ազգի ազատարարի Վիկտոր-Էմմանուէլ դրօշակը: Ամէնուրեք ցնծութիւն էր, ուրախութիւն: Ժողովուրդը պատրաստուում էր ընդունել Վիկտոր-Էմմանուէլի կողմից քաղաքում տեսուչ նշանակուած Քարէնյանո իշխանին:

Յեղափոխականօրէն տրամադրուած ապստամբները չորս օր շարունակ ռմբակոծութեան տարափի տակ էին պահում կայէթան, ուր ժողովրդի ցատումից վախենալով պատսպարուել էր Հռոմի պապը: Նրան պաշտպանելու համար երկու նաւ էր կանգնած ծովածոցում: Մէկը պատկանում էր Իսպանիային, իսկ միւսը՝ Հռոմին:

Մ. Նալբանդեանը յայտնում է, որ վաղը [1860ի Դեկտեմբերի 27ին] ուղեւորուելու է դէպի Հռոմ՝ յաւիտենական քաղաքը, որի վրայ նոյնպէս դրոշմուած էր ստրկութեան եւ բռնակալութեան կնիքը: Նա հաւատացած էր, որ շատ շուտով կը հնչի «Հռովմի ֆակտագրական գանգակը»:

Յեղափոխութեան օրերին Նէպոլում էր գտնուում Ալեքսանդր Դիւման, որ գրել է «Անկախութիւն» վերնագրով մի օրագիր եւ ցոյց տուել, որ շուտով Հռոմը, Լոմպարտիան, Հունգարիան ու Լեհաստանը կ'ազատագրուեն Աւստրիական բռնապետական լծից: Մ. Նալբանդեանի կարծիքով ուշադրութիւնից չէր վրիպել այն հանգամանքը, որ Իտալիայում կան շատ լեհեր, որոնք ուզում են կազմել «մի զինուորեալ լեհական լեգէոն եւ պատրաստ եւ կազմ սպասել մի կրակոտ նշանի»¹⁶: Մ. Նալբանդեանը այդ օրերին չէր բացառում եւ հայ-լեհական միացեալ զինակցութեան հարցը: «Զեմ նախանձում Իտալիայի ազատութեան, դորա հակառակ ի սրտէ ուրախ եմ, սակայն տեսնելով նորա ազա-

16 Ա.Ուր, 86:

տուֆիւնը եւ իմ ազգի տկարութիւնը, կրծում է սիրտս եւ այրում է հոգիս»¹⁷ :

«Արդեօք եւրոպական դէպքերը կապ ունեն մեզ հետ,- *Հարցնում է Մ. Նալբանդեանը եւ պատասխանում,-* Այո. վերաբերութիւն չունին, կրկնում եմ ես, ինչու, որ դուք արժանի չէք վերաբերութիւն ունենալու եւրոպական ազգերի հետ, անցնել այն փրկութեան կամուրջը, որից անցնում եմ ուրիշ ազգեր»¹⁸ :

Միքայէլ Նալբանդեանի նամակն աւարտւում է հետեւեալ խոհական խօսքերով. «էտնան եւ Վեգուվին ծխում եմ. Արարատի հին վուլկանի մէջ միթէ կրակ կմնայ իսպառ մահաբեր մտածութիւն»¹⁹ : *Սերգէյ Դարոնեանը նամակի առիթով, նկատում է.* «Այստեղ եւ դառնութիւն կայ, եւ ցաւ, սիրագործութեան ծարաւ եւ յոյսի շողատակում հայրենի Հայաստանի գալիք ազատութեան համար»²⁰ :

Միքայէլ Նալբանդեանի նամակը, որ ուղղուած էր Յարութիւն Սվաճեանին ծրագրային նշանակութիւն ունեցաւ հայ ազատագրական շարժման ներկայացուցիչների համար: Յետագայում նրանք շատ հարցերում կողմնորոշուեցին եւ հիմք ընդունեցին հայ նամակի բովանդակութիւնը:

*Մ. Նալբանդեանն անձամբ Մաճճինիին նամակ է ուղղել, որ մնում է անյայտ*²¹ : *Դրանից յետոյ նա Մաճճինիի հետ հանդիպել է Լոնդոնի Ա. Գերցէնի բնակարանում: Բայց յետոյ յայտնի է Մ. Նալբանդեանի մէկ այլ նամակը՝ ուղղուած Մ. Թազուրեանին, ուր նա դժգոհում է Պոլսի արեւմտահայ «համախոհների քուլուրթիւնից ու դանդաղկոտութիւնից», որ «իր նամակը Մաճճինին դեռեւս չի յանձնատուած»:* «Պարոն Մարտիրոսին [Մաճճինիին], - գրում է Մ. Թազուրեանը Մ. Նալբանդեանին, - նամակը մինչեւ հիմա չի տալուս կնեղեմաս, քայց կաղաչեմ միտ դիր քսելիքներուս պաղ արիւնով:

Քանի որ դու մեկնր ես մեր քաղէկն [Պոլսէն], կաշխատիմ, որ իրօք ստանամք ինչ-որ պարոն Մարտիրոսին ըսեր ես թէ ունիմք, որպէսզի իրկած նամակը իր մարդու կարենանք համարձակ տալ.

17 Ա.Ա.:

18 Ա.Ա.:

19 Ա.Ա.:

20 Գ.ԱՐՈՆՅԱՆ, Ա., *Միքայէլ Նալբանդեան*, Երևան 1979, 338:

21 ԻՆՃԻԿԵԱՆ, Ա., *Միքայէլ Նալբանդեանի կեանքի եւ գործունէութեան տարեգրութիւնը*, Երևան 1954, 201:

բայց իզուր, ազգին մէջ եղած անվերջանալի խնդիրները եւ այն մարդիկներուն գործքերը, որոնց վրայ քանի մի ամիս առաջ վստահութիւն ունէիմք եւ այժմ չունիմք, այսպիսի կրնիմները կրեսեմ, անհնարին կվհատեցնեն գմեգ: Հիմա խորհրդածէ. չունենալով այս քաղֆիս մէջ սեղանաւոր մը, ունիմք ըսելը թող որ զիս քրիթիկ կացութեան մէջ կդնեմ, այլեւս մեր ընկերները չեն ներեր, որ այսպիսի բան մը հաղորդեմ այն մարդուն, որ բոլոր ընկերութեան վարակումին կրնայ վնասել. ես, ինձի համար, քու ըրած տնօրինութեանդ վրայ բոլորովին ապահով, եւ եթէ լաւ մտածելէն յետոյ որոշես, որ նամակը պիտի տալ իր տեղ, եւ անկասկածաբար կուտամ, մտածե՛լ եւ իմացուր ինձի:

Աշխատեցայ, որ (Հոթֆելտ) եղբարց լոժ ունենամք հոս եւ հրամանը առիմք, քանի մը ատենէն լոժը պիտի բանամք: Այս լոժին անունն է Հայկ կամ Ռիօնք,

Մնամ սիրելիութեանդ՝ Ս. Թ.»²²:

*Խօսելով իտալական շարժման ղեկավար Մարտիրոսի (Մաձ-ձինիի) մասին, նամակում Ս. Թազւորեանը միաժամանակ շօշափում է դրա հետ անմիջական առնչուող հայ ազգային-ազատագրական շարժումների՝ «Հայկ կամ Ռիօն» գաղտնի կազմակերպութիւն ստեղծելու, Մ. Նալբանդեանի արեւմտահայ բարեկամներին համախմբելու հարցերի մասին*²³:

Ս. Թազւորեանի նամակի առթիւ Մ. Նալբանդեանի պատասխաններից մէկում (Մայիս 14-26, 1862. Կ. Պոլիս) ասւում է, որ արեւմտահայերը նոյնիսկ աշխատել են հնարաւորութիւն ստեղծել «Թրանսիայի կամ Իտալիայի հպատակութիւն» ընդունելու, որպէսզի այդ ճանապարհով ապահովեն իրենց Կոստանդնուպոլսում: Այդ գործում նրանց աջակցել է իտալահպատակ, ազգութեամբ հայ Խաչատրեան ազգանունով մէկը: «Նա ասաց, որ քանաչում է շատ իտալացիների, որոնց թւում է Մաձինիին, որ նա կաշխատի մի կերպ այդ անել, երբ Լոնդոն գայ»²⁴:

Ինչպէս երեւում է, իտալահպատակութեան ընդունումը վաղուց էր ծրագրւում: Արեւմտահայերը Ժ.Թ. դարի 50-60ա-

22 ՆԱԼԲԱՆՌԵԱՆ, Մ., *Նրկերի լիակատար ժողովածու*, հտ. 3, Երևան 1940, 438-440:

23 Անդ, 439:

24 Անդ, 410:

կաններին որոնումների ընթացքում մեծ յոյսեր էին կապում նաև իտալական ազգային-ազատագրական շաժումների հետ:

Մատթէոս Մամուրեանը ջերմ վերաբերմունք է ունեցել Նալբանդեանի գործի նկատմամբ: Մ. Նալբանդեանի մահուանից յետոյ Զմիւռնիայում հրատարակուող Գրիգոր Չիլինկիրեանի «Մաղիկ» հանդէսում գրել եւ տպագրել է նրա մասին երեք յօդուած եւ բարձր է գնահատել մեծ յեղափոխական-դեմոկրատի գործունէութիւնը:

Մ. Մամուրեանը Մ. Նալբանդեանին բնութագրում էր որպէս ազատասէր, ազգասէր, հայրենասէր ու գաղափարի մարդ. «Նալբանդեանցը, ինչպէս կենդանութեան ատեն, նոյնպէս մահուանէն ետեւ պիտի գործէ ազգին մէջ, քանի որ շղթան եւ սուրբ կրնար կաշկանդել եւ սպաննել այն լուստու գաղափարները, որոնց հոնտոր կանգնեցաւ նա եւ որոնք իբրեւ ամպրոպային փոթորիկներ կորստան թագադիր բռնաւորներու գլուխներուն վրայ, մինչեւ որ փայլակն ու կայծակը պայթին եւ թագ ու գլուխ այրին, տոչորին, վասնզի Նալբանդեանցը հաւատքի մը համար, ճշմարտութեան եւ ազատութեան հաւատքին համար գոհ ընկաւ Նալբանդեանցի ազատական հայրենասիրութիւնը անդադար հրաւեր մը ունի կարդալու մեզ եւ ազգը՝ նուիրական պարտք մը կատարելու»²⁵:

Մ. Մամուրեանը նրա գործի հետեւորդն էր արեւմտահայ հատուածում, նրա գաղափարների քարոզողը եւ, ինչպէս դիպուկ նկատել է ինքը՝ Մ. Մամուրեանը, Նալբանդեանցի աղմկալի կեանքը «թէ՛ ազգային դաստիարակութեան եւ թէ՛ ապագային համար ըրած մեծամեծ ծառայութիւններովը օգտուէտ դասեր կրնայ ընծայել մեզի»²⁶:

Մ. Մամուրեանը, որ սկզբում առաջադրում էր լուսաւորական գաղափարներ, աստիճանաբար անցնում է դէպի դեմոկրատիզմ:

Մ. Մամուրեանի խմբագրութեամբ Զմիւռնիայում հրատարակուող «Արեւելեան մամուլը» արձագանքել է կարիպալտիի մահուանը: Այդ կապակցութեամբ տրուում է նրա կեանքին վերաբերող մի ընդարձակ յօդուածաչար՝: Նիւթը քաղուած է Պ. Ժ..

25 Ի Մաղիկ, 1866, թիւ 123:

26 Ի Արեւմտեան մամուլ, 1882, Յունիս, թիւ 6, 265:

27 Անդ, Յունիս, Յուլիս, Օգոստոս, Սեպտեմբեր եւ Հոկտեմբեր ամիսների համարներում:

Քեմբրի գրած կենսագրութիւնից: Հեղինակը ներկայացնում է նրա ծառայութիւնները իր հայրենիքի հանդէպ: Մ. Մամուրեանին հաւանաբար դուր է եկել յօդուածաշարը, որոշ կրճատումներով, արտատպել է «Արեւելեան մամուլով»: Հեղինակը համակրանքով է գրում Կարիպալտու մասին, նրան համարում Եւրոպայի միակ դիւցազնը²⁸:

Յօդուածագիրը միաժամանակ ներկայացնում է նրա թուլութիւնը քաղաքականութեան հարցերում: Այդտեղ էլ երեւում է Մ. Մամուրեանի դրական վերաբերմունքն իտալական ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ: Մամուրեանը յարգանք տածելով այդ շարժումների վերաբերեալ, նպատակ ունէր ընթերցողների լայն շրջաններին ծանօթացնել իտալական «նիւցագնի» կեանքին ու ստեղծագործութիւններին:

Յօդուածաշարում լաւ է տրուած Կարիպալտու հայրենասիրութիւնը: Մամուրեանը ուզում էր նրա հերոսական օրինակով վարակել նաեւ հայ ժողովրդին:

Մամուրեանը յաճախ էր անդրադառնում իտալական ազգային-ազատագրական շարժումներին: Դա կապուում էր նրա ազատասիրութեան ձգտումների հետ: Նա առանձնապէս սիրել է զմայլուել է Մաձձինիի եւ Կարիպալտու գործունէութեամբ, «Կզմայլէի Մաձձինիի ու Կարիպալտիի վրայ, որ արդէն ո՛չ միայն իտալիոյ մանր մուրք բռնաւորներու, այլ բոլոր Եւրոպայի գահակալներու դէմ պատերազմ հրատարակել էին ու գաղտնի ընկերութիւններ կազմելով ազատութեան ու անկախութեան ոգին գործաւորելու մէջ սփռելու կջանային: Այս ազատական սկզբանց էի եւ անց մէջ փրկութիւն կտեսնէի»²⁹:

Նալբանդեանին համակրող Գրիգոր Չիլինկիրեանի, «Մաղիկը» գրում էր «Օրինակ ըլլամ մեզ իտալիայի ազատութեան այն երեք երեւելի շահատակները, որք հայրենիքի անկախութեան համար առաքուր կոխեցին անձնական կիրքը, մոռացան ատելութիւնը, եւ միաբանութեան ու սիրոյ համբոյր տուին իրարու»³⁰:

28 Ա.Աղ., թիւ 6, 1882, Յունիս 265:

29 Ի Մաղիկ, 1861, թիւ 2, 12:

30 Ա.Աղ., 1864, թիւ 82, 157:

Նկատի ունենալով Քաւուրին, Վիկտոր-էմմանուէլին եւ Կարիպալտուն:

Զիլինկիրեանը իր նախորդների նմանութեամբ համակրում էր իտալական ազատագրական շարժման ղեկավարներ՝ Մաձձինիի եւ Կարիպալտու հետ: Նա հայրենասիրական նամակներ էր յղում իտալական յեղափոխութեան ղեկավարներին եւ մասնակիցներին, երկիրը օտար լծից ազատագրելու կոչով: Մեծ հումանիստը ջանում էր ոգեւորել, խանդավառել, շահել նրանց գործի նկատմամբ աշխարհի ժողովուրդների համակրանքը: Հիւկոյի այդ քաղաքական ճառերն ու նամակներն արտացոլում են պատմական ճշմարտութիւնը: Դրանցում գնահատուում է Կարիպալտու հայրենասիրութիւնը, մարդասիրութիւնը, ազնուութիւնը եւ նուիրուածութիւնը ազատագրական ազնիւ պայքարին:

Մեզ հետաքրքրողը Կարիպալտու պատասխան նամակն է՝ ուղղուած «ազատութեան առաքեալին»՝ Վ. Հիւկոյին: Բնագրից թարգմանել էր Զիլինկիրեանը եւ հարազատ մնացել նրա ոճին:

Լոնտրա. 22 Ապրիլ 1864.

Սիրելի Վիկտոր Հիւկոյ.

Ձեր տարագրութեան մէջ ձեզի այցելութիւն մ'ընելս ինձի համար ոչ թէ փափաք՝ այլ պարտաւորութիւն մ'էր: Բայց շատ պարագաներ գիս կարգելուն այս պարտաւորութիւնը կատարելու: Կը յուսամ, որ պիտի հասկնամք թէ՛ ի մօտուստ, ինչպէս նաեւ ի հեռուստ՝ երբեք բաժանուած չեմ թէ՛ ձեզմէ եւ թէ՛ այն դատէն գորդուք կը պաշտպանէք:

Միշտ ձեզ³¹

Ի. Կարիպալտի

Երկու տարագիրներ՝ Կարիպալտին եւ Վ. Հիւկոն, լաւ էին հասկանում միմեանց: Կարիպալտին, իր հերթին, լաւ էր ըմբռնել Վ. Հիւկոյի ծանր վիճակը, հայրենիքից արտաքսուած լինելու նրա տառապանքը, ընդունել էր նրան այցելելու հրաւերը, սակայն հանգամանքները թոյլ չէին տուել:

Զիլինկիրեանը մի ուրիշ դէպքում «Ուղեւորութիւն ի Կոստանդնուպոլիս» աշխատութեան մէջ նոյնպէս դրուատանքով էր խօսում Կարիպալտի մասին: Նա չի թաքցնում իր հիացմունքը

իտալական ազգային հերոսի գործի նկատմամբ: «Կերազէի՛ կարիպալտիին պէս գաղափարի մը վեհութիւն գործին վեհութեան հետ գուգել եւ ժողովրդային փրկութեան մը հերոսն հանդիսանալով մշտնջենապէս տիրել ազգերու այն յիշողութեան մէջ որ կ'անուանի պատմութիւն»³²: *Իտալիայի միաւորումը դեռեւս պատմութիւն չէր դարձել, բայց այն, ինչ Գ. Չիլինկիարեանը տեսել էր եւ ապշել, համարուում էր ժամանակի պատմութեան կարեւոր իրադարձութիւններից մէկը:*

Առաջադիմական-դեմոկրատական դիրքերում էր գտնուում «Մուսայթ Մասեաց» հանդէսը, որ հրատարակուում էր Կ. Պոլսում 1857-1858: Նրա խմբագիրն էր Արմենակ Հայկունին (Յարութիւն ձիգմէջեան): Հանդէսը հայերին կոչ էր անում հետեւելու իտալացիներին եւ արիւն թափելով հասնել իրենց երազած ազատութեանը:

Ո՞վ էր Արմենակ Հայկունին եւ ի՞նչ ձեւով էր կապուում իտալական ազատագրական շարժման հետ: Արմենակ Հայկունին (1830-1867) Մ. Նալբանդեանի հետեւորդներից էր եւ արեւմտահայ դեմոկրատ գործիչներից մէկը: Նրա հրատարակած հանդէսը աւելի ուշ՝ 1863-ից վերանուանուեց «Մուսայթ Մասեաց: Ձայն ընկերասիրական» անունով:

Արմենակ Հայկունու գրած «Վատ սիրտ կամ սոսկալի գիշեր մը Սիրաբուզայի մէջ» ողբերգութեան գործողութիւնները տեղի են ունենում Միցիլիայի Սիրաբուզա քաղաքում: Հեղինակն իր հերոսների մտքերի միջոցով գուշակում է իտալիայի մօտալուր լուսաւոր ապագան:

Այսպիսի արիութեամբ,
Թող մե՛նք ապրի՛նք շարունակ,
Եւ մեր երկիրն իտալիոյ,
Հարագատ ըլլա՛նք գաւակ:
Թող պարծենայ իտալիա,
Մինչեւ Աշխարհս վերջանայ³³:

32 Չիլինկիարեան, Գ., *Ուղեւորութիւն ի Կոստանդնուպոլիս, Զմիւռնիա* 1883, 163:

33 Ի Մուսայթ Մասեաց, 1858, թիւ 1-3, 66:

Արմենակ Հայկունին գրել էր նաեւ «Էլիզա կամ վերջին Արեւելեան պատերազմի ժամանակ տեղի ունեցած իրական դէպք մը» պատմավէպը, որտեղ խօսում է Ղրիմի պատերազմում (1853-1856) տեղի ունեցած մի պատմութեան մասին: Հեղինակն այստեղ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը աշխատում էր զուգակցել իտալական ազգային-ազատագրական շարժման հետ, որի միջոցով, նրա համոզմամբ, հայերը կազատագրուեն թուրքական բռնակալութիւնից: Վէպը գեղարուեստական ստեղծագործութիւն էր, որտեղ որոշակի դեր է կատարել հեղինակի երեւակայութիւնը: Արմենակ Հայկունին նկարագրել է իտալական ազգային-ազատագրական շարժումներից մի դէպք: Շատ հաւանական է, որ այդ դէպքը ունեցել է իրական հիմք եւ առնչուել է 1848-1849, անգամ 1845-1860ական թուականների շարժումների հետ, քանի որ վէպը լոյս է տեսել 1861ին: Այնպէս ու Արմենակ Հայկունին գտնուելիս է եղել իտալական շարժման թարմ տպաւորութեան տակ: Նա տեսել էր կարիպալտու գլխաւորութեամբ իտալական ժողովրդի հերոսական պայքարը եւ երկրի ազատագրումը: Այդ մեծ իրադարձութիւնը անջնջելի տպաւորութիւն է թողել ճնշուած ժողովրդի զաւակի վրայ: Արմենակը Վառնայում ծանօթանում է իտալուհի Լեւլիի եւ նրա աղջկայ էլիզայի հետ: Մահուան մահճում Լեւլին իր աղջկան յանձնում է Արմենակի ձեռքը:

Արմենակ Հայկունին իտալացի Մաթէոյի անունից ճշմարտացիօրէն նկարագրում է արեւմտահայ բնակչութեան ծանր վիճակը թուրքական տիրապետութեան ներքոյ:

«Էլիզամ» առաջին քաղաքական վէպերից էր, որտեղ արծարծուում էր ժողովրդի ազատագրական հարցը: Ժամանակին վէպը շատ բարձր է գնահատել Զիլինկիրեանը: «Ճշմարիտ ազգաւիրութեան պարտքն է քաջալերել եւ վարձատրել այն ամէն գրիչները, որք մոյն նպատակով կը շարժին ի նպաստ Հայրենեաց»³⁴:

Այո, Արմենակ Հայկունին հայ ազատագրական շարժումները միայն ինքնակայ չէր տեսնում, այլ՝ միջազգային ոլորտում, այդ թւում եւ իտալական կապերի մէջ:

Ստեփան Ոսկանեանի խմբագրած «Արեւմուտք» հանդէսը լոյս է տեսել Փարիզում 1859, 1864-1865:

Ոսկանեանը ժամանակի դեմոկրատ գործիչներից էր:

34 Ի Ծաղիկ, 1861, թիւ 12, 95:

«Արեւմուտք»ի համարներից մէկում նա խոստովանում է, ու Աւստրիայի դէմ իտալական պատերազմը սկսելու ժամանակ (1859-1860) հանդէսը կարավառութիւնից թոյլտուութիւն խնդրեց բացելու քաղաքական մանր լուրերի բաժինը: Նա բացայայտում է իր մտադրութիւնը՝ այդ բացառիկ իրադարձութեան մէջ գործել ինչ ձեւով ուզում է լինի: Եթէ հարկաւոր է թարգմանութիւն, թարգմանութիւն տալ, միայն թէ արձագանքել ժամանակի սուր դէպքերին: «Պատերազմի տիեզերալուր շփոթը և ուզմական շառաչումը միայն ստիպեցին զմեզ մայրաքաղաքիս (Փարիզի) օրագիրներու արձագանք ըլլալ և մեր ընթերցողներու ուշադրութիւնը դէպի Իտալիա տանել: Հագիւ թէ մէկ-երկու հոգի հասկացան, թէ ինչ ըսել ուզինք և ինչ ըսինք: Հայ ժողովրդին վիճակը չէր ներեր, որ ընդհանուր քաղաքականութեան վրայ գրէինք, և մեր արտօնութիւնը կատիպէր, որ թարգմանէինք և ոչ թէ մեկնութիւնը տանք դէպքերուն: Եթէ երբեմն երկու թարգմանութեան մէջ տեղը ազատաբայր ակնարկութիւն մը սպրդեցաւ կամ Աւստրիայի դէմ սաստիկ բառեր տեսնուեցան, պատճառը մեր անբուժելի հայրենասիրութիւն պէտք է որ տրուի»³⁵: 1859-1860 իտալիան պատերազմ էր մղում Աւստրիայի լծից ազատագրուելու: Հետեւաբար իտալացիների մղած պատերազմը արդարացի էր, իսկ Աւստրիայինը՝ անարդարացի: Ոսկանեանը իտալական դէպքերը ծառայեցրել է իր ժողովրդի դատը պաշտպանելու համար: Իտալիայի մղած ազատագրական պատերազմը, իրօք, լաւագոյն առիթ էր հայ ազային-ազատագրական պայքարի դիրքերը թէկուզ որոշ չափով լուսաբանելու համար³⁶:

«Արեւմուտք»ում տպագրուած իտալական ազգային-ազատագրական շարժման վերաբերեալ յօդուածները հիմնականում պատուում են իտալական երեք խոշոր անահատների՝ Վիկտոր-Էմմանուէլ Երկրորդի, Քալուրի եւ Կարիպալտու շուրջը, քանի որ նրանք բոլոր իրադարձութիւնների կենտրոնում էին, նրանց հայրենասիրութեան եւ դիւցազնական գործերով է ներկայացուում այդ շարժումը:

Ինչ ձեւով է այդ անհատներին ներկայացնում Ոսկանեանը, ինչ-որ տեղ մօտենալով իտալական ժողովրդի հոծ զանգուածների մասնակցութիւնը այդ գործին:

35 Ի Արեւմուտք, 1859, թիւ 16, 121:

36 ՅԱԿՈՐԵԱՆ, Մ., *Իտալական ազատագրական պատերազմի արտացոլումը «Արեւմուտք»ում*, Ի ՊՔՀ 1980, թիւ 1, 191:

Ոսկանեանը հիանում է Կարիպալտու քաջութեամբ. «հիմա, եթէ Սեզիան գետին եզրին դէպի Մեծ լին կողմը նայինք ուրիշ անակնկալ փառութիւններու ասպարէզ կը տեսնենք եւ դէպքերը այնպիսի արագութեամբ կը կատարուին, որ մարդու երեւակայութիւնը կապշի կը մնայ: Այս ասպարէզին դիւցազնը Կարիպալտի»³⁷: Իրօք իտալացի հերոսն ոգեշունչ խօսքերով շահում էր մարդկանց սրտերը. «Մարդը կը զարմանայ ըսինք եւ գրեթէ ակամայ հին աշխարհակալի խօսքը կը յիշէ. եկի, տեսի, յարթեցի»³⁸:

Մի ուրիշ դէպքում էլ Ստ. Ոսկանեանը շարադրում է Կարիպալտու կենսագրութիւնը, մի մարդու, որի «անունը հիմա բոլոր Եւրոպայի մէջ նորեն կը հնչէ»: Նա յօդուածը վերջացնում է շեշտելով նրա բոլոր յատկութիւնները: «Հայկական փառութիւն մը, կարգէ դուրս անվախութիւն մը, հարբուխ ազգասիրութիւն մը եւ ռազմագիտական անգիտ ոգի մը, ահա Կարիպալտիին յատկութիւնները: Քանի հոգի կայ Եւրոպայի մէջ որ զանգնի ունենայ եւ գործածէ Կարիպալտին եւ իր դիւցազնի գունդը Իդալեանի անունը կը փառաւորեն եւ յիշել կու տան, որ մեռած չէ փառութիւնը անոնց սրտին մէջ»³⁹:

Այնուհետեւ Ոսկանեանը գտնում էր, որ շատ շուտով Իտալիան պէտք է ազատագրուի: Ի հակադրութիւն ակտորիական բռնակոր զինուորների, որոնք ելել են ուրիշի հողը եւ հայրենիքը գրաւելու, իտալացի զինուորին որակում է որպէս «օրինաւոր կամ կամաւոր զինուորներ, որոնք կանգնում են ընդդէմ մահուան, որպէսզի ազատագրեն գերութիւնից տկար, բայց ազնիւ ազգ մը»:

Ոսկանեանը գերազանհատում է Քաւուրի դերը, գովեստի խօսքեր ուղղում Կարիպալտու հասցէին եւ շատ քիչ դէպքերում խօսք է բացում Մաձձինիի գործունէութեան մասին:

Նա յիշում է Վիկտոր-Էմմանուէլի հայրենասիրական գործունէութիւնը. «Զինուորք մեծ փորձերու օրերը հասան: Զեզ կապալինիս: Պարտաւորութիւն ունիք Իդալեան դրօշին պատիւը պահելու, պարտաւորութիւն ունիք անելացնելու զայն»⁴⁰:

Ոսկանեանի համոզմամբ, Կարիպալտին կուռում էր Վիկտոր-Էմմանուէլ «վեհափառ» թագաւորի հետ միասին՝ վերջինիս իշխանութիւնը ամէնուրեք հաստատելու համար:

37 Ի Արեւմուտք, 1859, թիւ 16, 121:

38 Ա.Ա.Պ., 96:

39 Ա.Ա.Պ.:

40 Ա.Ա.Պ., թիւ 12, 90:

Իտալացիների ճշմարիտ հայրենասիրութիւնը օրինակ էր դառնում նաեւ միւս ճնշուած ժողովուրդների համար, այդ թւում էլ հայութեան. «Իդալացիք աշխարհիս ցոյց կու տաք,- գրում է նա,- որ մի եւ անկախ հայրենիքի արժանի էք. Պիտի հաշուիք դուք իբրեւ օրինակ եւ ձեր անունը կիսամեռ ազգերու սիրտը պիտի բժշկէ: Փառք ձեզի»⁴¹: Իտալացիների կողմից աստորիացիների դէմ մղուած պայքարի օրինակը միւս ազգերի համար դառնում էր բժշկութեան եւ առողջութեան միջոց իրենց «կիսամեռ» վիճակից դուրս գալու եւ կեանքի կոչուելու համար:

Լոմբարդիայի Բրեշիա քաղաքի ազատագրութեանը կոռուելու համար, մեծարելով Կարիպալտիին, Ոսկանեանը մեծարում է նաեւ Վիկտոր-էմմանուէլին, գտնելով, որ վերջինս ճիշտ է հասկացել գինուորի հայրենասիրական ծառայութիւնը, եւ այդ յիշարժան դէպքի համար նրան պարգեւատրել է ոսկէ մեդալով: Խնդիրն այն է որ Վիկտոր-էմմանուէլի դերը, տուեալ դէպքում, հրապարակախօսի կողմից ներկայացուած է իբրեւ ազգի միասնութեան կազմակերպիչ: Ոսկանեանի համար կարեւորը ոչ թէ այն էր, որ ճակատագրական պահին պառակտում տեղի չունենար այդ անհատների միջեւ, ժողովուրդը միասնաբար հանդէս գար ընդդէմ բռնակալութեան: Դա կը լինէր յաղթութեան գրաւականը: Բացի դրանից Ոսկանեանը որոշ չափով, այո, նոյնիսկ լիբերալ ըմբռնում ունէր ազատագրութեան հարցում եւ այն արտայայտուում էր ինչպէս Նապոլէոն Երրորդի, այնպէս էլ Կարիպալտիի, Քաւուրի ու Մաձձինիի դերերի գնահատման դէպքում: Նա Կարիպալտիին միւսների համեմատութեամբ դիտում է որպէս ենթակայ անձ: Քաւուրը, Վիկտոր-էմմանուէլ Երկրորդը եւ Մաձձինին միանշանակ են ներկայացուում այն առումով, որ կարեւորը, նրա կարծիքով, ոչ թէ նրանք են, այլ երկրի անկախութեան ձեռք բերումը:

Ոսկանեանը նկարագրում է առաջին հայ կարիպալտիականներից մէկի՝ Գիս կամ Գիշ զօրապետի գործունէութիւնը, որն ապրելով եւ գործելով Հունգարիայում, հունգարացիների հետ կամաւոր կերպով մեկնել է ճակատ՝ կոռուելու Իտալիայի ազատագրութեան համար: Նա գրում է «Օրագիր մը մէկ քանի երեւելի Մամառներուն Իդալիա երթալը կը հրատարակէ որոնց մէջ Գիս կամ Գիշ անուն գորապետ մ'ալ կը յիշուի: Արդեօք այս անձը ազգականութիւն ունի այն քաջ հայկազն գորապետին հետ, որ Մա-

41 Ա.Անդ, 77:

նառստանի կռուին ատեն հռչակաւոր եղաւ եւ որ ազատութեան սիրով բորբոքելով Աւստրիայի զինուեցաւ: Պատերազմի ետեւ Գիշ սպանուեցաւ գնդամահ, եւ իր անհուն հարստութիւնը չեղաւ, գանձերն ու ալ յափշտակեց»⁴²:

Ուրիշ որեւէ փաստ չի պահպանուել Գիս կամ Գիշ զօրապետի մասին: Բայց մի բան պարզ է, որ այս անձը վերին դասի՝ ազնուականութեան, զինուորականութեան ներկայացուցիչ է: Հնարաւոր է, որ այս հայկազուն Գիշը սերած լինի 1848-1849 հունգարական յեղափոխական կռիւների մասնակից Քիշեան-Պատիկեան դիւցազնի տոհմից, որը հունգարական յեղափոխութեան պարտութիւնից յետոյ մահուան դատապարտուեց:

1848ին հունգարական յեղափոխականների մէջ թուարկուած էր այս տոհմի դիւցազնի էրնցո Քիշի անունը 13 նշանաւոր գեներալների թւում⁴³:

Այսպիսով, հայ ժողովրդի որդիներից Գիզը կամ Գիշը, որպէս հալածուած ազգի ներկայացուցիչ, իր ներդրումն է ունեցել իտալական ազատագրական շարժման մէջ, կռուել է իտալացիների յաջողութեան համար:

Ոսկանեանի ազատագրական գաղափարներն անհետեւանք չմնացին, դրանք արտայայտութիւնը գտան 1862ին Զէյթունի հերոսական ապստամբութեան ընթացքում, ուր ազատագրութեան եւ դիւցազնաբար կռուող հայ զինուորները «բռնաւորութեան ոտքը կոտրած են»:

Միքայէլ Նալբանդեանն իտալիայում կատարած իր ճանապարհորդութիւնը աւարտում է թուրինում: Հնարաւոր է, որ այնտեղ հանդիպել է վաղուց ծանօթ Ոսկանեանին, եւ միասին քննարկել են հայ ժողովրդի ազատագրութեան հարցերը:

Ազատարադ կարիպալտականներ հայ ժողովրդի նակատագրի մասին

ԺԹ. դարի կէսերից, հայ գործիչները դրուատանքով էին գրում իտալական ազային-ազատագրական շարժումների մասին, ապա նոյն դարի վերջին երրորդ քառորդին, ազատաբաղձ կարի-

42 Անդ, 95:

43 АВЕРБУХ, Р. А., *Революция и национально-освободительная борьба в Венгрии 1848-1849 гг.*, Москва 1965, 311.

պալատականները, որոնց երկիրը միաւորել էր, ձեռք էին մեկնում եւ աշխատում գործնական միջոցներով օգտակար լինել հայ ժողովրդին:

1894-1896 Աբդուլհամիդեան հայկական ջարդերի շրջանում, թուրքական արիւնոտ քաղաքականութեան դէմ իրենց ձայնը բարձրացրին ամբողջ աշխարհում առաջադէմ մտաւորականութեան ներկայացուցիչները, նրանց թւում եւ ազատաբաղձ Խաւրիյի զաւակները:

Դրանցից էր Հալէպի իտալական հիւպատոս, Խաւրիյի անկախութեան պատերազմի հերոս՝ Հենրիկոս Վիթոյի յանձնախումբը: Նրա ղեկավարած յանձնախումբի կազմի մէջ էին Խաւրիյի, Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Անգլիայի ներկայացուցիչները: Վերջին պահին աշխատանքներին հրաժարուեցին մասնակցել Գերմանիան եւ Աւստրո-Հունգարիան ու իրենց մանդատը յանձնեցին Հ. Վիթոյին:

Նրանք 1896ին Յունուարին այցելում են Չէյթուն, տեղում քննարկելու հայկական կոտորածների հարցը: Պատուիրակներից շատերը դիտելով Չէյթունի տեղադիրքը ապշած մնացին, որ այդքան փոքրաթիւ մասը կարողացել է դիմադրել թուրքական հրոսակներին: Հ. Վիթոյի յանձնախումբը փոխադարձ զիջումների պայմանով, համաձայնութեան է բերում հայկական եւ թուրքական կողմերին, որի արդիւնքում՝ 1896ի Յունուարի 30ի համաձայնագիրն էր: Դա Չէյթունցիների յաղթանակի գրաւականն է:

Չէյթունից նրանց հեռանալուց յետոյ եւս Արեւմտեան Հայաստանի այս մասերը մնացին նախկին վիճակում: Դրանց խանգարեց մեծ տէրութիւնների բռնած դիրքը⁴⁴:

Բայց այստեղ հետաքրքրականն այն է, որ «ագատաբաղձ իտալացի» Հ. Վիթոն, աշխատում էր օգնութեան հասնել մի ժողովրդի, որն իր պատմական ճակատագրով նմանում էր իտալացիներին:

Հայ նշանաւոր գրող Արփիար Արփիարեանը «Նոր կեանք» պարբերականում յօդուած գրեց եւ նուիրեց այս յիշարժան պատմական դէպքին. «կ'ողջունեմ քեզի, դիւցազնաբաղձ Չէյթուն»: Արփիար Արփիարեանը նկարագրում էր Հ. Վիթոյի յուզմունքը: «Խանդավառ բոցով աչքերը լեցուած, գրում է Արփիար Արփիարեանը, վիթռ խնդրեց իբր դիւցազնակամ մի յիշատակ մը

44 ՊՕՂՈՍԵԱՆ, Հ. Մ., *Չէյթունի պատմութիւնը*, Երեւան 1969, 54-355:

գուրգուրանքով իր հայրենիքը պահել թուրքին գաւակներէն ծակ ծակ դրօշը, որ Զէյթունի սարերէն ամիսներ ամբողջ մարդկութեան սիրտը տրոփել տուաւ: Դեռ վառօդ բուրոյ իրենց արիւնակաթ ձեռքերով, վերջին համբոյրին հետ, իբր վաւերացում, իրենց անուններն ալ փառքերու վկայ այդ լաթին դրոշմէն, ինչպէս սարերուն գագաթը, այն երիտասարդները, որոնք դրսէն վագած էին Զէյթունցիին հետ գրկընդիստուն մէկ սիրտ, մէկ հոգի կոուելու թշնամիին դէմ:

Իր ազատութեան համար մարտիրոսացող ժողովրդի գալարումներուն տես ոչ ֆրանսիացիին, ոչ անգլիացիին կը գգան իտալացիին սարսուռը: Օտարին կոշկոնիչ թակը անոր գլուխն ալ շատ ատենն նզոված պահեց»⁴⁵:

Իսկ քանի որ դրօշը ծածկուել էր արիւնահեղ մարտերի ժամանակ թշնամու գնդակներից, ապա այն աւելի իտալացու, նոյնպէս էլ հայի համար: Արփիար Արփիարեանը գտնում էր, որ առանց իտալական մեծերի հնարաւոր չէր իտալիայում միասնութեան հասնել, շէշտում է նաեւ նրանց հայրենասիրական ոգին. «Կարիպալտին եկած էր Քաւուրին հետ. Քաջութիւն ու խելք ձեռք ձեռքի տուած հայրենասիրութեան մեծ հովանիին տակ»⁴⁶:

1896ին Հ. Վիթոն «Քաջակորով», «հոգին կրակոտ, միտքը գորեղ» ձեր այդ գարիբալդիականն աշխատում էր իր ուժերի ներածին չափով օգնել հայերին:

Արփիար Արփիարեանն իրաւացիօրէն նախ ցոյց էր տալիս, որ հային չի հասկանայ ոչ ֆրանսիացին, ոչ անգլիացին, քանի որ նրանք իրենց մաշկի վրայ չէին զգացել ճնշման սարսուռը, այլ թերեւս միայն հասկանայ իտալացին, որն իր մաշկի վրայ կրել էր բռնապետական դաժան լուծը:

Իտալիան թօթափեց բռնապետական լուծը եւ յաղթեց շնորհիւ Քաւուրի, Կարիպալտիի եւ Հենրիկոս Վիթոյի նման հայրենասէրների ու քաջերի:

Իրօք, հայ ժողովրդի այդ շրջանի տառապանքը միայն կարող էր լաւ հասկանալ ազատաբաղձ իտալացին, որ պայքարի էր դուրս եկել բռնապետական լծի դէմ: Հենրիկոս Վիթոն, գործնականօրէն օգնում էր հայերին՝ փոքր ինչ չափով կիսելով նրանց տառապանքը: Թէեւ դաժան էր թուրքիայի կողմից հայերի դէմ

45 Ազատասիրական գաղափարները հայ հրապարակախօսութեան մէջ, Երեւան 1982:

46 Ա.Աղ., 287:

կիրառուող բռնութիւնները, բայց Հենրիկոս Վիթոն, տեսնելով հայութեան ազատաբաղձ պայքարը, լաւատեսօրէն էր նայում նրա ապագային:

Հենրիկոս Վիթոյի հետ միասին հայ ժողովրդի ճակատագրով հետաքրքրուում էին նաեւ Իտալիայի միւս հայրենասէր զաւակներ: Դրանցից էին Ռիչչիոտթի Կարիպալտին եւ Ամիլքարէ Զիբրիանին: Առաջինը Իտալիայի ժողովրդական հերոս Ճուզեպպէ Կարիպալտիի կրտսեր որդին էր: Նա իր հօր հետ միասին կռուել է 1866ի Աւստրո-պրուսական պատերազմում, մասնակցել 1867ի Հռոմի գրաւման համար մղուող Մենտանէի ճակատամարտին: Աւելի ուշ՝ 1870-1871, Ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ, հանրապետական գործիչը, կռուել էր Ֆրանսիական կողմի հետ դաշնակցած Պրուսիայի դէմ: Այնտեղ նա Վոզեզեան բանակի Դ. կամաւորական բրիգադի հրամանատարն էր: 1897ի Յոյն-թուրքական պատերազմի ժամանակ նոյնպէս կամաւորական բրիգադի հրամանատար էր: Այդ բրիգադը մարտնչում էր Յունաստանի կողմում Թուրքիայի դէմ: Ռիչչիոտթի Կարիպալտին մասնակցել է նաեւ 1911-1912 իտալա-թուրքական պատերազմին⁴⁷:

Միւս հերոսը՝ Ամիլքարէ Զիբրիանին մասնակցել է 1859-1860ական թուակիթներին Ֆրանս-իտալա-աւստրիական պատերազմին, որտեղ լուծուում էր Իտալիայի ազատագրման հարցը: Նա յատկապէս աչքի է ընկել կարիպալտիականների 1860-1869 արշաւանքների ժամանակ: Ամիլքարէ Զիբրիանին որպէս 1866ի արշաւանքի մասնակից դատապարտուել է մահապատժի, բայց շուտով հեռացել է Իտալիայից եւ ազատուել: Այնուհետեւ մասնակցել է կրետէ կղզու 1866-1869 թուրքերի լծի դէմ ուղղուած յունական ապստամբութեանը: Նա 1871ին Փարիզի հերոսական կոմունայի պատմութիւնից յետոյ բռնուել է եւ Ֆրանսիական դատարանը նրան դատապարտել մահապատժի, որ այնուհետեւ փոխարինուել է ցմահ բանտարկութեան: Դատարանի ներումից յետոյ միառժամանակ մնում է Փարիզում, իսկ աւելի ուշ տեղափոխուում է Իտալիա: 1867ին ինքնապաշտպանութեան նպատակով մարդ է սպանում, որի համար դատապարտուում է 25 տարուայ բանտարկութեան: Ամիլքարէ Զիբրիանիի բանտից ազատման համար Իտալիայում տեղի ունեցան քաղաքական ցոյցեր:

Ամիլքարէ Զիբրիանին սոցիալիստ էր եւ մասնակցել է 1893ի Յիւրիխի եւ 1896ի Լոնդոնի վեհաժողովների աշխատանք-

47 Советская историческая энциклопедия, Москва 1963, т. 4, 109.

ներին: Նա ծաւալել է նաեւ հասարակական գործունեութիւն, թղթակցել է «Իւմանիտ» թերթին, որ հրատարակում էր ժան ժորեսը:

Ռիչչիոտթի Կարիպալտին եւ Ամիլքարէ Չիբրիանին իտալական խօսարանի անդամներ էին: Նրանք 1897ին իրենց կամաւորական ջոկատներով օգնեցին յոյն ժողովրդին, որն ապստամբել էր թուրքական բռնապետական լուծը տապալելու: Ամիլքարէ Չիբրիանին քրիստոնեայ յոյն ժողովրդի ազատութեան համար ուղղուած կոչումներից մէկի ժամանակ ծանր վիրաւորուեց: Դա էլ պատճառ եղաւ «իբ եւ մեծանուն ընկերոջ վրայ քովանդակ աշխարհի սքանչացումը» հրակիրելուն:

Այնպէս որ իտալացի այս երկու մեծ հերոսներն Ռիչչիոտթի Կարիպալտին եւ Ամիլքարէ Չիբրիանին արկածային կեանքով են ապրել: Նրանք 1899ին նամակներ են ուղարկում հայ ժողովրդին: Ռիչչիոտթի Կարիպալտին 1899 Մարտի 27ին թուակիր նամակում գրում է. «Բացարձակապէս անօգուտ կը կարծեմ խաղաղութեան խորհրդածոյովիս դիմելը»: Իտալացիները ժամանակին համոզուեցին, որ ոչ մի խաղաղութեան խորհրդածոյով հնարաւորութիւն չունի ազատագրելու տառապած մի ժողովրդի: «Հայերը, ինչպէս եւ միւս ժողովուրդները՝ որոնք այսօր Թուրքիայ բռնութեան լուծը կը կրեն, եթէ ազատ ըլլալ կ'ուզեն, պետք է այդ արդարութեան եւ մարդկայնութեան գործը պահանջեն զենք ձեռով-նիս»⁴⁸: Ռիչչիոտթի Կարիպալտի կարծիքով միայն ապստամբութեան ուղղով հայերը կարող էին ազատուել թուրքական բռնապետական լծից եւ իրենց վրայ հրակիրել եւրոպական դիւանագիտութեան ուշադրութիւնը: Եթէ գործը հասնի ապստամբելուն եւ կամաւոր իտալացիներից օգնութիւն խնդրելու հարցին, ապա այդ դէպքում նա պատրաստ է օգնելու: «Նա եւ իմ բարեկամներս մենք մեզ տրամադրութեան տակ կը դնենք դժբախտ հայ ժողովրդին, որուն հետ է մեր բոլոր համակրութիւնը»⁴⁹:

Ամիլքարէ Չիբրիանին նոյնպէս իր կարեկցանքն էր յայտնում հայկական դատի վերաբերեալ եւ զօրավար Ռիչչիոտթի Կարիպալտի նման հակուած էր կարծելու, որ խորհրդածոյովները այս հարցը չեն կարող լուծել, քանի որ թուրքիայից եւրոպական մեծ պետութիւններն ունեն իրենց սպասելիքներն ու հաշիւները: Նրանք աշխատում էին թուրքիան անդամահատեն

48 Ի Դրօշակ, 1899, թիւ 3, 34:

49 Ա.Ա.:

եւ «առիւծի քափնն ստանալ»: Ամիլքարէ Չիբրիանին դատապարտում էր եւրոպական մեծ տէրութիւններին այն բանի համար, որ նրանք չուզեցին խառնուել հայկական ջարդերի օրերին թուրքիայի սուլթան Աբդուլ Համիդի ներքին գործերին եւ աշխատեցին հովանաւորել նրան եւ նրա գահը անսասան պահել: Այդ սուլթանի ձեռքերը արիւնի մէջ էին թաթախուած: Նա «գոնեիկ չարագործ է, աւազակ է, եղեռնագործ է»: «Այս տխուր փորձերէն ետէր,- գրում է նա,- քաղաքակիրթ ըսուած Եւրոպայէն յուսալիք բան չունինք:

Ողբերգական բոպէի մը մէջ Երեսի վրայ ձգեց ձեզ, երբ թրքական եսթ-աղամը ձեզմէն հազարաւորներ կը մանգղէր, թէւ Եւրոպայի ժողովուրդները ձեզի հետ էին»⁵⁰: Ամիլքարէ Չիբրիանին գտնում էր, որ եւրոպական մեծ տէրութիւնների դաժան քաղաքականութիւնից զատ, որոնք հանդէս եկան թուրքական սուլթանի պաշտպանութեան դիրքերից, կար նաեւ եւրոպական ժողովուրդների բարոյական օգնութիւնը, որ «հարստահարուած ժողովուրդների» օգտին էր: Ամիլքարէ Չիբրիանին իրաւացի կերպով նշում էր, որ եւրոպական կառավարութիւնները երբեք ազատութիւն չեն շնորհի ժողովրդին: Ուրեմն մնում էր մի հանգամանք «Ազատութիւնը կոռուելով եւ գայն արիւնով լողցնելու ձեռք կը ձգուի:

Հարստահարուած ժողովուրդները մէկ իրաւունք միայն ունին, անվիճելի իրաւունք-ապստամբութիւնը:

Եթէ դուք խելամոռեմ գայն պատրաստելու միջոցներ ունիք, վստահ եղէք իմ վրայ, իմ աջակցութեան վրայ»⁵¹: Այս նամակը նա գրում էր Փարիզից 1899ի Ապրիլի 4ին:

Դրան յաջորդել է «հին մեծանուն գաբրիելական ռազմիկի»՝ Ամիլքարէ Չիբրիանին մէկ ուրիշ՝ թուով 2րդ նամակը՝ «Հայերը» «Դրօշակ», 1901, համար 9 վերնագրով, որ նոյնպէս ուղղուած էր «Եւրոպայի հայ ուսանողական միութեանը»: Իտալացի նշանաւոր հասարակական գործիչը կոչ էր անում ոչ թէ աղմուկ-աղաղակ հանել, այլ գործել, գտնելով, որ ուրիշների քաջալերական խօսքերը չեն կարող խրախուսել հայերին: Ամիլքարէ Չիբրիանին գործի մարդ էր: Նրա կարծիքով, հայերը չպէտք է յուզուեն եւ զգացմունքներով առաջնորդուեն, քանի որ «ազատութիւնը չեն

50 Ա.Ա.Պ., 35:

51 Ա.Ա.Պ.:

մուրաք, այլ կ'առնեն, ուրիշներէն չեն խնդրեր, այլ կուուելով ձեռք կը բերեն»։ Եթէ ժողովուրդը ազատ է ուզում լինել, արցունքներ չպէտք է թափի, այլ պէտք է կազմակերպուի, պէտք է պայքարով շահի իր ազատութիւնը։ Նա քննադատում էր եւրոպական դիւանագիտութեանը, որին հաւատ չպէտք է ընծայել. այն նոյնքան վտանգաւոր է, ոքան ոճրագործ Աբդուլ Համիդը։ Նրա կարծիքով հայերի յոյսը եւ հաւատը պէտք է լինի քաջութիւնը, յանդգնութիւնը, ատելութիւնը։ «Նետուեցէ՛ լեռները,- գրում է նա,- եւ Արդուլ Համիդի աւազակներուն դէմ՝ աւազակային սրածուրփեան եւ աւերածութեան անխնայ պատերազմը մղեցէ՛ք, ըրէ՛ք անոնց, ինչպէս անոնք ձեզի ըրին»⁵²։

Երկու ուղի կայ այդ մղձաւանջային վիճակից դուրս գալու համար՝ կամ մեռնել հերոսաբար՝ գէնքը ձեռքին կուուելով, կամ էլ՝ «լալկան» ձեռով։ Եթէ ընտրուի առաջին ուղին, ապա կ'ազատուեն, մինչդեռ երկրորդով ընթանալով «ազատութեան հոտը չէ՛ք առնէր»։

Ռիչչիոտթի Կարիպայտին եւ Ամիլքարէ Չիբրիանին իրենց ջանքերով շնորհակալութիւնը առաջարկելով Հայաստանին, իրականում չէին պատկերացնում հայ ժողովրդի ծանր վիճակը, ապստամբելու հնարաւորութիւններ չունենալու եւ միւս հանգամանքները։ Այդ պատճառով էլ նրանց առաջարկները չվերածուեցին գործնական քայլերի։

Իտալացի հերոսների նամակները չափազանց հետաքրքիր են իտալա-հայկական ազատագրական շարժման պատմութեան ուսումնասիրման համար։

ՀՐԱԶԵԱՅ ԱՄՄԱՐԵԱՆ

Summary

**MICHAEL NALBANDYAN AND HIS LIKE-MINDED
PERSONS ABOUT ITALIAN
NATIONAL-LIBERATION MOVEMENT**

HRACHYA ASMARIAN

The article is the first practice to give a positive appreciation of national-liberation movement of Michael Nalbandyan and his like-minded persons Smbat Shahaziz, Harutyun Svachyan, Serovbe Tagvoryan, Armenak Haykuni, Grigor Chilinkiryan, Matteos Mamuryan, Stepan Voskanyan in the XIXth century in years 50-60.

Following the example of Italian national-liberation movement Armenian public figures inspired the Armenians to emancipate themselves from sultan's Turkey's and Russian's despotic systems as it would give new prospects to the national political progress and development.